

փակէր բոլոր միջադէպերը, բերանները քննութեան ենթարկելով ականաւոր տոքթորին, որ ջուրով մը կը լուցնէր ամէնէն գազան ցաւերը անգամ: Ու այսպէս, գազայէ գազա, գեղէ գեղ: Ոչ մէկ տեղ հայ առանձին գիւղականները, որոնց հեռաւոր կարօտը կ'այրէր Մաթիկին երակները, Սասնոյ լեռներէն: Ամէն ինչ թո՛ւրք. բանով մը նման Թիֆլիսի այն թաղերուն, ուր դեռ թաթարները կը բնակին կաշի գործելով, աղբին ու որդին մէջտեղը, մզլած մնսնիտներու պորտէն շառաւիղուող տուններու գիծով մը: Երկաթուղիին մօտերը երկիրը կը փոխուէր: Կայանները, որոնց ոճը հակադրութիւն մըն էր թրքական մոլթ ու նկուն շինողութեան: Մզկիթներէ դուրս չէն-քերը, բաւական մեծկակ: Դէպի Ատաբազար ու... Ար-մաշ:

Չեմ հետեւիր երկաթուղիին: Ճակատագրական դիպ-ւած մը կտրեց այս ուղեգիծը ու մեր երկու հերոսները Պրոսպայի մարզը, անկից ալ մահուան առաջնորդեց: Այդ դիպուածը հանդիպում մըն էր Պելիճիկի կայարանին մէջ տեղւոյն հայոց առաջնորդին: Պատուհանէն Մաթիկը նշմարեց ականոցաւոր եկեղեցականը, թաւիչ փակեղ, քալ-ւածք, կեցուածք, նայուածք տարօրէն հարազատու-թեամբ կը յիշեցնէին Ատանայի առաջնորդը, որ խօսած էր իր ընկերներուն մասին, ներկայացնելով Պելիճիկի առաջնորդը ինքնատիպ մարդ մը, ազդեցիկ ու ըմբոստ, թուրքերուն հետ վարուելու մէջ առանձին տաղանդով ու քիչիկ մըն ալ... յեղափոխական:

Մաթիկ Մելիքխանեանց իջաւ վակոնէն, մօտեցաւ եկեղեցականին, առաւ աջը, բարեկելով զինքը անունէն: Ռուսահայ շեշտը թեթեւ մը պղտորեց եկեղեցականին հաճարտայայտութիւնը, որ աչքին պոչովը գնացքը շրջապատող ոստիկանները կը զննէր: Ամէն կառաշար, այդ գիծին վրայ, կայարաններու հոյակապ ամայութիւնը ոգեւորող ու գունաւորող երեւոյթ է: Անոր սպասումը, ծովսին ու սուլիչին հեռաւոր ալիքները մէջտեղ կը հանեն իրենց բուններէն, ապահովութեան այդ պաշտօնեաները,